մանկամարդք և բազմաթիւ օրիորդք՝ « Առաւօտեան լուսնի նման յօնքերով[1] », և այլ շատ երիտասարդք նորատէգ մօրուաք՝ « Սիրականթեղ և լուսափայլ աչերով », որը կը թիավարէ, որը բեռներ կը կրէ...։ Առաջ գնացել էր նաւն, մութ-կապոյտ՝ այլ աստեղազարդ երկինքն վերև, սև-կապուտակ ծովն ստորև. ճանապարհորդք ամէնքն իրենց ննջարանները քաշուած, իմացայ որ ինձ ևս քաշուելու ատեն է. զի խոնաւ օդն կրնար վնասել։ Ելայ նստած տեղէս, աչացս հանդիպեցաւ հիւսիսակողմն՝ երկնից վրայ մեծ արշ համաստեղութիւնն. որ անտարբեր՝ աղօտ լոյսը կու սփռէր ծովուն երեսը. անտարակոյս ասկէ ութ դար առաջ սոյն այս համաստեղութիւնն իւր տեղը կեցած դիտած էր մեր Անեցւոց գաղթը։

Դու ինձ պատմէ երկնից Սայլիկ,
Մըտքէս ասի, կ'աղաչեմ քեզ.
Թուի որ այդպէս թառած երկինք
Ի ծով, ցամաք լոյս կու սրփռես.
Անշուշտ՝ տեսար, առաջ ութ դար,
Ծովուն երես երեր-տատան,
Մեր Անեցի քուրերն ու աղբար,
— Ո՞ւր գընացին կամ ինչ եղան։ —
Դուն լըսեցիր նոցա գանգատ,
Անէծք և իղձք, լացն, հառաչանք,
Մըրմունջ սըրտից, երգ սիրակաթ.
— Ասա, դու ինձ մի խօսք միակ. —
Արդեօք նոցա սըրտին խորեր,
Դեռ կայ նըշան մի հայութեան.

1. Ռամկական զրիմեցի երգ.